ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«19» մարտի 2024թ.

ՀՐԱՄԱՆ N 144-Ա

«ՊԵԳԱՍՈՒՍ ԷՅՐԼԱՅՆԶ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Զ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 2 հավելվածի 18-րդ կետով, հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի հունվարի 10-ի N 3-Ա և 2022 թվականի հունվարի 20-ի N 19-Ա հրամանները և «Պեգասուս Էյրլայնզ» ավիաընկերության 2024 թվականի փետրվարի 29-ի հայտերը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Պեգասուս Էյրլայնզ» ավիաընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Ստամբուլ/LTFJ/-Երևան/UDYZ/-Ստամբուլ/LTFJ/ երթուղով՝ 2024 թվականի մարտի 31-ից մինչև 2024

թվականի մայիսի 23-ը՝ շաբաթական 5 (հինգ) չվերթ հաճախականությամբ, 2024 թվականի մայիսի 24-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 26-ը՝ շաբաթական 7 (յոթ) չվերթ հաճախականությամբ և Անթալիա/LTAI/-Երևան/UDYZ/- Անթալիա/LTAI/ երթուղով՝ 2024 թվականի ապրիլի 2-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 25-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություններ:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով նախատեսված Ստամբուլ/LTFJ/-Երևան/UDYZ/-Ստամբուլ/LTFJ/ երթուղով չվերթները համարվում են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի հունվարի 10-ի N 3-Ա հրամանով տրված թույլտվության շրջանակներում Ստամբուլ/LTFJ/-Երևան/UDYZ/-Ստամբուլ/LTFJ/ երթուղով իրականացվող չվերթների շարունակությունը (ԻԱՏԱ) 2024 թվականի ամառային նավիգացիոն ժամանակահատվածում՝ 2024 թվականի մարտի 31-ից մինչև 2024 թվականի մայիսի 23-ը՝ շաբաթական 5 (հինգ) չվերթ հաճախականությամբ, 2024 թվականի մայիսի 24-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 26-ը՝ շաբաթական 7 (յոթ) չվերթ հաճախականությամբ, որոնք բավարարում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին և որոնց վրա տարածվում է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի հունվարի 20-ի N 19-Ա հրամանի 1-ին կետով նախատեսված արտոնությունը:

3. Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ձմեռային ժամանակահատվածի մասով արտոնության վերաբերյալ դրույթները կսահմանվեն առանձին հրամանով՝ Ընկերության կողմից ներկայացվող հայտի հիման վրա:

4" Կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թիվ 909/180324 թույլտվության տեղադրումը Կոմիտեի կայքում:

5. Կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվությունների հանձնումն Ընկերությանը:

Recoverable Signature

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 909/180324
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 909/180324
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR TWO AND MORE CHARTER SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

Օդանավ շահագործողը Aircraft Operator	«Պեգասուս Էյրլայնզ» “Pegasus Airlines”
Պատվիրատուն Charterer	«Պեգասուս Էյրլայնզ» “Pegasus Airlines”
Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը) Type(s) of aircraft(s)	A320, A321, B737-800
Հաճախականությունը Frequency	31.03.24-23.05.24՝ շաբաթական 5 չվերթ 31.03.24-23.05.24՝ 5 flights per week 24.05.24-26.10.24՝ շաբաթական 7 չվերթ 24.05.24-26.10.24՝ 7 flights per week
Երթուղին Air route	Ստամբուլ/LTFJ/-Երևան/UDYZ/-Ստամբուլ/LTFJ/ Istanbul/LTFJ/-Yerevan/UDYZ/-Istanbul/LTFJ/
Թույլտվության գործողության ժամկետը Permission validity	31/03/2024 մինչև 26/10/2024 31/03/2024 till 26/10/2024

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
CHAIR OF CIVIL AVIATION COMMITTEE
MIHRAN KHACHATRYAN

Recoverable Signature

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՎԵՐ Է
ELECTRONIC SIGNATURE IS VALID

19.03.2024
(տալու ամսաթիվը)
(date of issue)